

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Վ. Գ. ՀԱՄԱՐՉՈՒՄՅԱՆ

ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Լեզու և լեզվաբանություն» հանդեսի նախորդ համարում մենք անդրադարձել ենք ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի ներսում գործող «Հայոց լեզու» ընդհանուր խորագրով ՀՀ ԳԱՍ Հ. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի 019 միացյալ մասնագիտական խորհրդում 2001-2003 թթ. պաշտպանություն գտած ատենախոսությունների սեղմագրերին:

Ստորև ներկայացնելու ենք «Օտար լեզուներ» ընդհանուր խորագրով Երևանի պետական համալսարանի 009 մասնագիտական խորհրդի նիստերում նույն տարիներին պաշտպանության արժանացած ատենախոսությունների սեղմագրերի համառոտ վերլուծությունը: Այսպիսով ամբողջանում է այն ընդհանուր աշխատանքը, որ ծավալվում է մեր հանրապետությունում բանասիրական գիտությունների ոլորտում, մասնավորապես գիտական որակավորման ուղղությամբ:

Այգրքից ենք հարկ ենք համարում նշելու, որ ինչպես 019, այնպես էլ 009 մասնագիտական խորհրդում բավականին լուրջ և գիտականորեն միանգամայն արդիական ատենախոսություններ են դրվում հրապարակային պաշտպանության, և դա մեզանում լեզվաբանական գիտության առաջընթացի լավագույն երաշխիքներից է: Հիշյալ գիտական խորհուրդների աշխատանքին լծված են մեր հանրապետության անվանի և մասնագիտական առումով հայտնի լեզվաբաններ, գիտական և բուհական աշխատանքի մեծ փորձ ունեցող մասնագետներ, որոնք նպաստում են համապատասխան կադրերի պատրաստման գործին:

009 մասնագիտական խորհրդում վերջին տարիներին հրապարակային պաշտպանության է արժանացել շուրջ երկուսուկես տասնյակ թեկնածուական ատենախոսություն: Իմնականում *գերմանական, ռոմանական, սլավոնական լեզուներ*, ինչպես նաև *համեմատական և տիպաբանական լեզվաբանություն* մասնագիտությունների գծով (խորհրդի նախագահն է ճանաչված անգլերենագետ, լեզվաբան Ս. Գասպարյանը):

Եկատելի է, որ մեկ առանձին լեզվի կամ տարբեր լեզուների միջև առնչությունների հարցերը ավելի մեծ տեղ են զբաղեցնում, քան լեզուների համեմատական և տիպաբանական ուսումնասիրության խնդիրները:

Ատենախոսությունների գերակշիռ մասը նվիրված է հայերենի և նրան ցեղակից մի շարք լեզուների արդի վիճակից բխող (համաժամանակյա կտրվածքին վերաբերող) տարբեր կարգի առնչությունների հարցերի ուսումնասիրությանը, և դա միանգամայն բնական է, եթե նկատի ենք ունենում մեր հանրապետությունում լեզվաբանության զարգացման առաջնային խնդիրները: Այնուհետև քիչ չեն նաև այն աշխատանքները, որոնցում քննության են առնվում այս կամ այն լեզվի բառապաշարին, քերականական կառուցվածքին առնչվող հարցերը:

Ըստ այդմ նկատում ենք, որ գործ ունենք առնվազն երեք կարգի աշխատանքների հետ: Դրանց մի զգալի մասը վերաբերում է մի կողմից հայերենի, իսկ մյուս կողմից ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի և գերմաներենի այս կամ այն երևույթի ուսումնասիրությանը, իսկ մեկ աշխատանք նվիրված է անգլերենում ֆրանսերենից կատարված փոխառություններին:

Այդուհանդերձ, սույն ատենախոսությունները բովանդակության (թեմատիկայի) առումով առանձնանում են հետևյալ հինգ խմբի մեջ:

Ատենախոսություններից երկուսում քննվում են լեզուների հնչյունաբանությանը վերաբերող հարցեր. մի դեպքում բավականին հաջողված փորձ է ուսեներենի և հայերենի բարձրամայնների հնչույթային և հնչյունական (նաև ուղղախոսական) մակարդակներում նկատելի փոխներթափանցման երևույթի ուսումնասիրումը (Մ. Առուստամյան), իսկ մյուս դեպքում բացահայտվում են և հայերենի հետ համեմատության մեջ դրվում գերմաներենի հնչույթային համակարգի այն առանձնահատկությունները, որոնք տիպաբանության առումով ներկայացնում են որոշակի կարևորություն (Ս. Առաքելյան):

Համեմատաբար մեծ թիվ են կազմում այն աշխատանքները, որոնք նվիրված են լեզուների բառագիտական ուսումնասիրությանը՝ ոչ միայն առանձնակի, այլև զուգարդական վերլուծությամբ:

Չ. Գոլստորդիի երկերի հայերեն և ռուսերեն թարգմանությունների համեմատությամբ անգլերենի դարձվածային միավորների լեզվամշակութային հայեցակետից քննությունը ցույց է տալիս, թե նման երևույթները որքանով են կարևոր ընդհանուր մշակութային առնչությունների տեսակետից (Ն. Հարությունյան): Այսպես նաև հատուկ ուսումնասիրության նյութ են դարձել ֆրանսերենի բառապաշարի նորաբանությունները և նրանց հայերեն համարժեցները (Ն. Հովակիմյան), գիտական պատշաճ մակարդակով է ներկայանում բանաստեղծական տեքստում քառմաստային փոխակերպումներին նվիրված աշխատանքը, որը որոշակի պատկերացում է տալիս ֆրանսիական ժամանակակից պոեզիայի զարգացման մասին (Ն. Մանուկյան):

Բառարանագիտական քննության աշխատանքներից մեկում հայ-ռուսերեն և ռուս-հայերեն բառարանների հիման վրա քննության են առնված նույնար-

մատ բառերը (Ա. Գարեգինյան), իսկ մյուսում ըստ համապատասխան բառարանների ընձեռած նյութի՝ ներկայացվում է 17-18-րդ դդ. ֆրանսերենից անգլերենին անցած փոխառությունների պատմությունը, հաղորդակցական յուրացման ընթացքը (Ա. Գալստյան):

Բառակազմական կաղապարներից այն, որը դրսևորվում է գոյականական բաղադրիչ-հիմքով, միաժամանակ ներկայացնում է բառակազմական որոշակի հարացույց, հաղորդակցման ոլորտում ունի կիրառական մեծ կարևորություն: Ընդհանուր լեզվաբանական նման հարցը թեկնածուական ատենախոսության թեմա դարձնելը նշանակում է հանդես բերել լեզվաբանական որոշակի պատրաստվածություն (Գ. Մարկոսյան):

Ժամանակակից անգլերենի շարժում արտահայտող բառային միջոցները քննված են համակարգային մոտեցմամբ, ընդ որում նման միջոցներ են դիտվում ոչ միայն շարժում ցույց տվող բառերը, այլև նույնաբծեք միավորները (Զ. Գրիգորյան): Կարծում ենք, որ այս կարգի ուսումնասիրության կարելի է ձեռնամուխ լինել նաև հայերենի, այլև սրա և ուրիշ լեզվի ընձեռած նյութի նկատառումով:

Ատենախոսություններից երեքը վերաբերում է լեզուների քերականական կառուցվածքի այս կամ այն երևույթի ուսումնասիրությանը: Այսպես, հայերենի և իսպաներենի զուգադրությամբ քննության է առնված անգլերենի սեռական հոլովով կամ պատկանելություն ցույց տվող կառույցների իմաստաբանությունը (Տ. Միքայելյան), որտեղ ոչ միայն վեր են հանվում կառուցվածքային համապատասխանություններ, այլև փորձ է արվում հանգելու տիպաբանական որոշ ընդհանրությունների: Զուգադրական վերլուծության են ենթարկված գերմաներենի, այսպես կոչված, անցյալի անորոշ դերբայի զանազան դրսևորումները և նրանց համարժեքները հայերենում (Յ. Ղուկասյան):

Ժամանակակից հայերենում այն երկրորդական բաղադրյալ ժամանակները, որոնք կազմվելիս են լինում ոչ թե էական, այլ օժանդակ բայերով, ի համեմատություն բուն բաղադրյալ ժամանակների, կիրառության տեսակետից ինչ-որ չափով դարձել են ոչ հաճախական: Այնինչ գերմաներենում դրանք այսօր ևս ունեն լայն կիրառություն, և այդ երկու լեզուների համարժեք ձևերի զուգադրությունը, որը խիստ կարևոր է, երբեմն կարող էր տարակուսանք առաջացնել: Հատուկ ուսումնասիրության առարկա է դարձել նաև ռուսերենի պայմանի հարաբերություններ ցույց տվող մախադասության տրամաբանական-շարահյուսական դրսևորումը, որը կատարված է տեսական համեմատաբար հասկանալի վերլուծությամբ (Ա. Հակոբյան):

Տեքստի լեզվական-բանասիրական ուսումնասիրությունը գոյություն ունի վաղ ժամանակներից, սակայն անցյալ դարի վերջին մեկ - երկու տասնամյակում այն ունեցավ համեմատաբար բուռն զարգացում ոչ միայն լեզվաբանության, այլև հարակից այլ գիտությունների մեջ: Եվ պատահական

չէ, որ մեր օրերում ևս այս բնագավառին հատկացվում է լայն ուշադրություն: 019 մասնագիտական խորհրդում նույնպես զգալի թիվ են կազմում այդ բնագավառի մեջ մտնող ատենախոսությունները, որոնք ընհանուր առմամբ գրված են գիտական պատշաճ մակարդակով, ուսումնասիրվող նյութի բավարար իմացությամբ, ինչպես նաև մանրամասն և բարեխիղճ վերլուծություններով:

Աստվածաշնչի ռուսերեն թարգմանության քննադրում թևավոր խոսքերի համակարգված նկարագրությունը ուշագրավ է ամենից առաջ թարգմանական համարժեքության, ռուսաց լեզվում նման միավորների տարածվածության վերհանման տեսակետից (Գ. Սարգսյան), ընդ որում ատենախոսը կարողացել է բացահայտել թևավոր խոսքերի այն առանձնահատկությունները, որոնք նշանակալից են եղել ռուսերենի դարձվածաբանության համար: Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» երկի նյութի հիման վրա իր որոշակի լուծումն է ստացել հաղորդակցական այնպիսի միջոց, ինչպիսին բառախաղերն են (Ա. Խաչատրյան), որոնք ուսումնասիրված են ոչ միայն անգլերենում, այլև հայերեն թարգմանության մեջ:

Պրագմատիկ լեզվաբանության ոլորտում անգլերենի ընձեռած նյութի հիման վրա գրված ատենախոսություններից մեկում քննվում են հեռուստատեսային գովազդի գործաբանական առանձնահատկությունները, ընդ որում նաև հայերենի և ռուսերենի համապատասխան նյութի զուգակցմամբ (Լ. Բարսեղյան), իսկ մյուսում ուշադրության առարկա է դարձել ավելի կոնկրետ խնդիր՝ պայմանական ասույթների ներակա (իմպլիցիտ) իմաստները ժամանակակից անգլերենում (Տ. Սանուկյան): Նման աշխատանքներն, անշուշտ, կարող են նպաստել լեզվական հաղորդակցման ծանաչողական-գործաբանական ուսումնասիրությունների ընդլայնմանը:

Բրիտանական և ամերիկյան տարածված պարբերական մամուլից քաղված նյութի հիման վրա փորձ է արված ուսումնասիրելու լրագրային բնագրի կառուցվածքի առանձնահատկությունները (Ա. Ապրեսյան). նման աշխատանքն ուշադրության առարկա է եղել ոչ այնքան հայերենի, որքան անգլերենի առումով, այնինչ այն օրինակ կարող է հանդիսանալ նաև հայերենի վերաբերյալ նույնարժեք ուսումնասիրության համար՝ անկախ վերջինիս հաջողվածության աստիճանից, որն այլ խնդիր է:

Մասնագիտական խորհրդի նիստերում պաշտպանություն գտած զգալի թվով աշխատանքներ, լայն իմաստով վերցված, վերաբերում են լեզուների ճարտասանական-ոճաբանական, հատկապես լեզվաոճաբանական խնդիրների լուսաբանմանը: Դրանք քննության նյութ են ունեցել կամ կոնկրետ լեզուների, կամ որևէ լեզվով հայտնի բնագրի (զեղարվեստական երկի) նմուշները: Սյս բնութի ատենախոսությունները, եթե նույնիսկ տեսական-ոճաբանական հարցերի մեջ չեն խորանում, ապա այդուհանդերձ անպայման կարևոր նշանակություն ունեն կոնկրետ աղբյուրների, ոճական արժեք ներկայացնող այս կամ այն երևույթի վերլուծության տեսակետից:

Աստվածաշնչի գրքերից մեկի Գովհաննեսի Ավետարանի անգլերեն թարգմանության մեջ գործածված մակդիրներն, անշուշտ, ունեն ճանաչողական մեծ կարևորություն, և այս հարցին անդրադառնալը միանգամայն դրվատելի է, մասնավաճ, երբ այն ուսումնասիրվում է գիտության ճանապարհ ելած ուսումնասիրողի կողմից (Յ. Թովմասյան)։ Ատենախոսը ոչ միայն տիրապետում է թե՛ նյութին և թե՛ սուրբգրային ոլորտին, այլև անում է մի շարք կարևոր եզրակացություններ։ Նման աշխատանքները, բնականաբար, կարող են շարունակվել նաև հետագայում կարևորագույն այդ բնագրի մյուս գրքերի ուսումնասիրման նկատառումով։

Այս տեսակետից գնահատելի են նաև այն աշխատանքները, որոնցում քննության են արժանացել Շեքսպիրի դրամաներում ճարտասանական միջոցների կիրառության հարցերը՝ ի համեմատություն հայերեն համապատասխան թարգմանությունների (Լ. Չարչոզյան), Ս. Ֆիցցերալդի հայտնի վեպի լեզվական արտահայտչականության միջոցների համարժեքությունը՝ իբրև թարգմանության պրոբլեմ, համեմատած հայերեն թարգմանության հետ (Լ. Քիչախչյան)։

Անհատական ոճի դրսևորման մի այնպիսի միջոց, ինչպիսին է համեմատությունը, առանձին ուսումնասիրության է արժանացել անգլերենի նյութի հիման վրա (Ա. Կնյազյան), իսկ մեկ այլ աշխատանքում, գրեթե նույնպիսի մոտեցումով, քննության է առնված եղանակավորության կարգի ոճավորման գործառությունը, ընդ որում ժամանակակից անգլոամերիկյան քաղաքական գործիչների ելույթների ընձեռած փաստերի հիման վրա (Ա. Խոյեցյան)։ Կարծում ենք, որ նման աշխատանքներ կարելի է գրել նաև հայերենի և մեկ այլ լեզվի թարգմանական-գուգադրական թե՛ բառակազմության և թե՛ իմաստարանության տեսակետից։

Գնահատելի է այն, որ մեզանում ևս ուսումնասիրվում են լեզուների գործառական ոճերը՝ թեկուզ կոնկրետ ժանրային մեկ ոլորտի ընձեռած նյութի հիման վրա. այս իմաստով ուշադրության է արժանի հրապարակախոսական արձակի մեջ գործառական ոճերի փոխկապվածության հարցի քննարկումը (Գ. Մուրադյան)։

Եվ վերջապես, ատենախոսություններից մեկում հատուկ ուշադրության է արժանացել զոյականի թվի ոճական կողմը, ընդ որում ներկայացվում են այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են գերմաներենին (Յ. Բադրամյան)։

Այսպիսով, իբրև 009 մասնագիտական խորհրդի աշխատանքի գնահատություն՝ կարծում ենք, որ խորհրդի աշխատանքներն ընթանում են հաջողությամբ, և դա կարևոր է, քանի որ մեզանում աճում է նաև գիտական աստիճան ունեցող օտար լեզվի մասնագետների թիվը. նրանք, համալրելով մեր բարձրագույն ուսումնաչան հաստատությունների գիտական կադրերի շարքերը, կարող են իրենց նպաստը բերել նոր սերնդի գիտամեթոդական առումով պատշաճ կրթությանը։

1. Սպրեյան Ա.Ո., Լրագրային տեքստի կառուցվածքային առանձնահատկությունները հաղորդակցական լեզվաոճաբանության տեսանկյունից (ժամանակակից անգլալեզու մամուլի փաստական նյութի հիման վրա), Եր., 2001, 23 էջ:
2. Սոսքեյան Ա.Ո., Գերմաներենի հնչյութային համակարգի տիպարանական առանձնահատկությունները, Եր., 2003, 21 էջ:
3. Ахоян А.В., Логико-синтаксический анализ сложных предложений с условными отношениями в русском языке, Եր., 2002, 19 с.
4. Арустамян М.И., Интерференция согласных в русской речи армян, Եր., 2003, 26 с.
5. Арутюнян Н.А., Лингвокультурологический аспект английской фразеологии как переводческая проблема (на материале произведения Дж. Голсуорси и их переводов на русский и армянский языки), Եր., 2001, 25 с..
6. Բաղրամյան Գ.Ա., Գոյականի բժի ոճական առանձնահատկությունները ժամանակակից գերմաներենում, Եր., 2002, 20 էջ:
7. Բարսեղյան Լ.Վ., Գեոստատիստիկայի զովագրի լեզվագործարանական առանձնահատկությունները անգլերենում (հայերենի և ռուսերենի զուգադրությամբ), Եր., 2003, 26 էջ:
8. Բիշահյան Լ.Ս., Լեզվաարտահայտչական միջոցների համարժեցությունը որպես թարգմանչարանական խնդիր (Ս. Ֆիցցեռալդի «Մեծն Գերարդ» վեպի և նրա հայերեն թարգմանության նյութի հիման վրա), Եր., 2001, 22 էջ:
9. Գալստյան Ա.Գ., Անգլերենում ֆրանսերենից փոխառված բառերի յուրացման ընթացքը 17-18-րդ դարերում (քաղաքական լեզվանյութի հիման վրա), Եր., 2002, 23 էջ:
10. Гарегинян А.Р., Однокоренные слова в двуязычном словаре (на материале армяно-русских и русско-армянских словарей), Եր., 2003, 17 с.
11. Григорян К.Г., Лексические средства выражения понятия передвижения в современном английском языке, Եր., 2001, 28 с.
12. Թովմասյան Գ. Վ., Սակիդրների ճանաչողական արժեքը Գովհանեսի Ավետարանում, Եր., 2002, 25 էջ:
13. Խաչատրյան Վ.Վ., Բառախաղերի թարգմանության խնդիրը (Երեսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգության նյութի հիման վրա), Եր., 2003, 24 էջ:
14. Хоецян А.К., Стилеобразующая функция категории модальности в ораторской речи (на материале современных политических деятелей), Եր., 2003, 24 с.
15. Князян А.Т., Фигура сражания как особенность индивидуального стиля автора (на материале английского языка), Եր., 2001, 26 с..
16. Դովակիմյան Ե.Ա., 1960-2000թթ. քաղաքաշարային նորարանությունները ֆրանսերենում և դրանց հայերեն համարժեցների խնդիրը, Եր., 2002, 27 էջ:
17. Դովկասյան Գ.Ա., Գերմաներենի անցյալի անորոշ դերբայի դրսևորումները և նրանց համարժեցները հայերենում (զուգադրական վերլուծություն), Եր., 2001, 24 էջ:
18. Մանուկյան Ե.Գ., Բառիմաստային փոխակերպումներ ջանաստեղծական տեքստում (ժամանակակից ֆրանսիական պոեզիայի նյութի հիման վրա), Եր., 2002, 26 էջ:
19. Մանուկյան Տ.Գ., Պայմանական ատյունների ներակա իմաստները ժամանակակից անգլերենում, Եր., 2002, 27 էջ:
20. Սիջայեյան Տ.Ք., Անգլերենի 'ե-ով և ռ-ով կառուցների իմաստարանական վերլուծություն (հայերենի և իսպաներենի զուգադրությամբ), Եր., 2001, 25 էջ:
21. Սուրադյան Գ.Գ., Գրապարակախոսական արձակը որպես զորժառական ոճերի հակադրամոթարանություն (անգլերեն փաստական նյութի հիման վրա), Եր., 2003, 23 էջ:
22. Маркосян Г.В., Словообразовательная парадигма в функциональном освещении (на материале отсубстантивной деривации), Եր., 2002, 26 с.
23. Չարչոզյան Լ.Ս., Ճարտասանական միջոցների կիրառությունը Երեսպիրի կատակերգությունների լեզվում և դրանց հայերեն թարգմանության համարժեցությունը, Եր., 2001, 21 էջ:
24. Саркисян А.Г., Библиейские крылатые слова в русском языке: Опыт системного описания, Եր., 2003, 23 с.